ՀԱՐՑԱՇԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 704-Լ ՈՐՈՇՈՒՄ

Հարց 1.
Հայաստանի Հանրապետության արդադատության նախարարությունը մշակում և իրականացնում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված գործունեության ոլորտում՝

Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

(Կանոնադրություն, կետ 1)

Հարց 2.
Նախարարությունն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է՝

Հայաստանի Հանրապետության օրենքով:

(Կանոնադրություն, կետ 2)

Հարց 3.
Նախարարությունն ունի՝

Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

(Կանոնադրություն, կետ 5)

Հարց 4.
Նախարարության կառուցվածքում ընդգրկվում են՝

Նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, նախարարի խորհրդականների, մամուլի քարտուղարի, օգնականների և նախարարի տեղակալների օգնականների պաշտոնները, կառուցվածքային ստորաբաժանումները, գործակալությունները և վերահսկողական ծառայությունը:

(Կանոնադրություն, կետ 6)

Հարց 5.
Ում կողմից է հաստատվում նախարարության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը

Հայաստանի Հանրապետության վարչապետի:

(Կանոնադրություն, կետ 13)

Հարց 6.
Նախարարության գործունեությունը ղեկավարում է՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

(Կանոնադրություն, կետ 14)

Հարց 7.
Նախարարը հաշվետու է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայաստանի Հանրապետության վարչապետին:

(Կանոնադրություն, կետ 15)

Հարց 8.
Նախարարին անմիջական հաշվետու են՝

Նախարարի տեղակալները, գլխավոր քարտուղարը, գործակալության ղեկավարը, վերահսկողական ծառայության ղեկավարը, ենթակա մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարները, նախարարի խորհրդականը, օգնականը, մամուլի քարտուղարը և հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

(Կանոնադրություն, կետ 16)

Հարց 9.
Նախարարը նշանակում և ազատում է

Իր խորհրդականին, մամուլի քարտուղարին, օգնականին, նախարարի տեղակալի օգնականին:

(Կանոնադրություն, կետ 18«11»)

Հարց 10.
Գլխավոր քարտուղարի տեղակալների թիվը սահմանում է՝

ՀՀ վարչապետը:

(Կանոնադրություն, կետ 27)